ԿՈՆՎԵՆՑԻԱ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ստորագրվել է 1967 թ. հուլիսի 14-ին՝ Ստոկհոլմում, փոփոխվել է 1979 թ. հոկտեմբերի 2-ին)

Պայմանավորվող կողմերը,

ցանկանալով նպաստել պետությունների միջեւ նրանց ինքնիշխանության ու հավասարության հարգման հիման վրա փոխըմբռնման եւ համագործակցության բարելավմանը՝ ելնելով նրանց փոխադարձ շահերից,

ձգտելով ստեղծագործական գործունեության խրախուսման նպատակով աջակցել մտավոր սեփականության պաշտպանությանը ամբողջ աշխարհում,

ցանկանալով արդիականացնել ու ավելի արդյունավետ դարձնել արդյունաբերական սեփականության եւ գրական ու գեղարվեստական երկերի պաշտպանության բնագավառում ստեղծված Միությունների կառավարումը նրանցից յուրաքանչյուրի ինքնուրույնությունը լիակատար հարգելու պայմաններում,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Կազմակերպության հիմնադրումը

Սույն Կոնվենցիայով հիմնադրվում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը:

ՀՈԴՎԱԾ 2
Սահմանումներ

Սույն Կոնվենցիայի նպատակների համար.

i) "Կազմակերպություն" նշանակում է՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ),

ii) "Միջազգային բյուրո" նշանակում է՝ Մտավոր սեփականության միջազգային բյուրո,

iii) "Փարիզի կոնվենցիա" նշանակում է՝ 1883 թ. մարտի 20-ին ստորագրված՝ Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին կոնվենցիան, ներառյալ նրա ցանկացած վերանայված տարբերակը,

iv) "Բեռնի կոնվենցիա" նշանակում է՝ 1886 թ. սեպտեմբերի 9-ին ստորագրված՝ Գրական ու գեղարվեստական երկերի պաշտպանության մասին կոնվենցիան, ներառյալ նրա ցանկացած վերանայված տարբերակը,

v) "Փարիզի միություն" նշանակում է՝ Փարիզի կոնվենցիայով ստեղծված Միջազգային միություն,

vi) "Բեռնի միություն" նշանակում է՝ Բեռնի կոնվենցիայով ստեղծված Միջազգային միություն,

vii) "Միություններ" նշանակում է՝ Փարիզի միությունը, այն հատուկ Միություններն ու Համաձայնագրերը, որոնք ստեղծվել են այդ Միության հետ կապված,
Բեռնի միությունը, ինչպես նաեւ ցանկացած այլ միջազգային համաձայնագիր, որը
կոչված է նպաստելու մտավոր սեփականության պաշտպանությանը, որի կառավարումը,
4 (iii) հոդվածին համապատասխան, ստանձնել է Կազմակերպությունը,
viii) "մտավոր սեփականությունը" ներառում է այն իրավունքները, որոնք վերաբերում են.
- գրական, գեղարվեստական ու գիտական երկերին,
- դերասանների կատարումներին, ձայնագրություններին, ռադիո- եւ հեռուստահաղորդումներին,
- գյուտերին՝ մարդկային գործունեության բոլոր բնագավառներում,
- գիտական հայտնագործություններին,
- արդյունաբերական նմուշներին,
- ապրանքային նշաններին, սպասարկման նշաններին, առեւտրային անվանումներին
եւ նշաններին,
- պաշտպանությանը անբարեխիղճ մրցակցությունից,
ինչպես նաեւ բոլոր այլ իրավունքները, որոնք բխում են մտավոր գործունեությունից արդյունաբերական, գիտական, գրական եւ գեղարվեստական բնագավառներում:

ՀՈԴՎԱԾ 3
Կազմակերպության նպատակները

Կազմակերպության նպատակներն են.
i) նպաստել մտավոր սեփականության պաշտպանությանն ամբողջ աշխարհում պետությունների միջեւ համագործակցության միջոցով եւ անհրաժեշտության դեպքում
համագործակցելով ցանկացած այլ միջազգային կազմակերպության հետ,
ii) ապահովել վարչական համագործակցությունը Միությունների միջեւ:

ՀՈԴՎԱԾ 4
Գործառույթները

3-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար Կազմակերպությունը իր
համապատասխան մարմինների միջոցով եւ հարգելով Միություններից յուրաքանչյուրի
իրավասությունը.
i) նպաստում է այնպիսի միջոցների մշակմանը, որոնք նախատեսված են ամբողջ
աշխարհում մտավոր սեփականության արդյունավետ պաշտպանության ապահովման եւ այս
բնագավառում ազգային օրենսդրության ներդաշնակեցման համար,
ii) կատարում է Փարիզի միության, այդ Միության հետ կապված հատուկ Միությունների եւ Բեռնի միության վարչական գործառույթները,
iii) կարող է համաձայնել ստանձնել ցանկացած այլ միջազգային համաձայնագրի

կատարումը կամ մասնակցել դրան,
iv) խրախուսում է այնպիսի միջազգային համաձայնագրերի կնքումը, որոնք կոչված են նպաստելու մտավոր սեփականության պաշտպանությանը,
v) իր համագործակցությունն է առաջարկում այն պետություններին, որոնք դիմել են մտավոր սեփականության բնագավառում իրավական-տեխնիկական օգնության խնդրանքով,
vi) հավաքում եւ տարածում է մտավոր սեփականության պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն, կատարում ու խրախուսում է հետազոտություններն այդ բնագավառում եւ հրապարակում է այդ հետազոտությունների արդյունքները,
vii) ապահովում է այն ծառայությունների գործունեությունը, որոնք նպաստում են մտավոր սեփականության միջազգային պաշտպանությանը, եւ համապատասխան դեպքերում այս բնագավառում կատարում է գրանցում, ինչպես նաեւ հրապարակում է այդ գրանցմանը վերաբերող տվյալներ,
viii) ձեռնարկում է ցանկացած այլ անհրաժեշտ միջոց:

ՀՈԴՎԱԾ 5
Անդամակցությունը

1. Ցանկացած պետություն, որը հանդիսանում է Միություններից որեւէ մեկի անդամ, ինչպես դրանք սահմանած են 2 (vii) հոդվածում, կարող է դառնալ Կազմակերպության անդամ:
2. Կազմակերպության անդամ կարող է դառնալ Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող ցանկացած պետություն՝ պայմանով, որ.
i) նա հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության, Միավորված ազգերի կազմակերպության հետ կապված մասնագիտացված հիմնարկներից որեւէ մեկի կամ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամ կամ Միջազգային դատարանի Կանոնադրության կողմ, կամ
ii) Գլխավոր ասամբլեայի կողմից հրավիրվել է՝ դառնալու սույն Կոնվենցիայի կողմ:

ՀՈԴՎԱԾ 6
Գլխավոր ասամբլեա

1. ա) Հիմնադրվում է Գլխավոր ասամբլեա, որը կազմված է սույն Կոնվենցիայի կողմ պետություններից, որոնք հանդիսանում են Միություններից որեւէ մեկի անդամ:
բ) Յուրաքանչյուր պետության կառավարություն պետք է ներկայացված լինի մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ ու փորձագետներ:
գ) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը հոգում է նրան նշանակած կառավարությունը:

2. Գլխավոր ասամբլեան՝
i) Համակարգող կոմիտեի ներկայացմամբ նշանակում է Գլխավոր տնօրենին,
ii) քննարկում եւ հաստատում է Կազմակերպության վերաբերյալ Գլխավոր տնօրենի հաշվետվությունները եւ նրան տալիս է բոլոր անհրաժեշտ հրահանգները,
iii) քննարկում ու հաստատում է Համակարգող կոմիտեի հաշվետվությունները, հավանություն է տալիս նրա գործունեությանը եւ տալիս է հրահանգներ,
iv) ընդունում է Միությունների համար ընդհանուր ծախսերի երկամյա բյուջե,
v) հավանություն է տալիս Գլխավոր տնօրենի կողմից առաջարկվող այն միջոցառումներին, որոնք վերաբերում են 4 (iii) հոդվածում նախատեսված միջազգային համաձայնագրերի կատարմանը,
vi) ընդունում է Կազմակերպության ֆինանսական կանոնակարգը,
vii) սահմանում է Քարտուղարության աշխատանքային լեզուները՝ հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության փորձը,
viii) 5-րդ հոդվածի 2-րդ կետի ii ենթակետում նշված պետություններին հրավիրում է դառնալ սույն Կոնվենցիայի կողմ,
ix) որոշում է, թե Կազմակերպության անդամ չհանդիսացող որ պետությունները եւ որ միջկառավարական ու միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները կարող են հնարավորություն ստանալ՝ որպես դիտորդներ մասնակցելու իր նիստերին,
x) կատարում է այլ համապատասխան գործառույթներ սույն Կոնվենցիայի շրջանակներում:
3. ա) Յուրաքանչյուր պետություն, անկախ նրանից մեկ թե մի քանի Միության անդամ է, Գլխավոր ասամբլեայում ունի մեկ ձայն:
բ) Գլխավոր ասամբլեայի անդամ պետությունների կեսը կազմում է քվորում:
գ) Չնայած "բ" ենթակետի դրույթներին՝ եթե որեւէ նստաշրջանի ժամանակ ներկայացված պետությունների թիվը կեսից պակաս է, սակայն հավասար է կամ գերազանցում է Գլխավոր ասամբլեայի անդամ պետությունների 1/3-ը, նա կարող է ընդունել որոշումներ. սակայն, Գլխավոր ասամբլեայի բոլոր որոշումները, բացառությամբ իր ընթացակարգին վերաբերող որոշումների, ուժի մեջ են մտնում միայն հետեւյալ պահանջները կատարելու դեպքում: Միջազգային բյուրոն նշված որոշումները պետք է ուղարկի Գլխավոր ասամբլեայի այն անդամ պետություններին, որոնք այնտեղ ներկայացված չէին, եւ խնդրի գրավոր ձեւով, որոշումն ուղարկելու օրվանից հաշվված՝ եռամսյա ժամկետում, հայտնել՝ այդ որոշումներին "կողմ" են քվեարկում, "դեմ", թե "ձեռնպահ": Եթե այդ ժամկետը լրանալուց հետո այդ կերպ քվեարկած կամ "ձեռնպահ" մնալու մասին հայտնած պետությունների թիվը հասնում է այն քանակին, որը պակասում էր նստաշրջանի ժամանակ քվորում ապահովելու համար, այդ որոշումներն ուժի մեջ են մտնում՝ պայմանով, որ պահանջվող մեծամասնությունը պահպանվում է:
դ) "ե" եւ "զ" ենթակետերի դրույթները պահպանելու պայմանով՝ Գլխավոր ասամբլեան իր որոշումներն ընդունում է քվեարկողների ձայների 2/3-ով:
ե) 4 (iii) հոդվածում նախատեսված միջազգային համաձայնագրերի կատարմանը վերաբերող միջոցառումներին հավանություն տալու համար պահանջվում է

քվեարկողների ձայների 3/4 մեծամասնությունը:
զ) Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 57-րդ ու 63-րդ հոդվածների համաձայն՝ Միավորված ազգերի կազմակերպության հետ համաձայնագրին հավանություն տալու համար պահանջվում է քվեարկողների ձայների 9/10 մեծամասնությունը:
է) Գլխավոր տնօրեն նշանակելու (հոդված 2 (i)), միջազգային համաձայնագրերի կատարման վերաբերյալ Գլխավոր տնօրենի կողմից առաջարկվող միջոցառումներին հավանություն տալու (2 (v) հոդված) եւ կենտրոնական գրասենյակի տեղափոխման (հոդված 10) համար ձայների պահանջվող մեծամասնությունը պետք է ստացվի ոչ միայն Գլխավոր ասամբլեայում, այլ նաեւ Փարիզի միության Ասամբլեայում ու Բեռնի միության Ասամբլեայում:
ը) Ձեռնպահ ձայները չեն հաշվվում:
թ) Պատվիրակը կարող է ներկայացնել միայն մեկ պետություն եւ քվեարկել միայն նրա անունից:
4. ա) Գլխավոր ասամբլեայի հերթական նստաշրջանը գումարվում է Գլխավոր տնօրենի կողմից՝ յուրաքանչյուր երկրորդ օրացուցային տարում:
բ) Գլխավոր ասամբլեայի արտակարգ նստաշրջանը գումարվում է Գլխավոր տնօրենի կողմից՝ Համակարգող կոմիտեի կամ Գլխավոր ասամբլեայի անդամ պետությունների 1/4-ի պահանջով:
գ) Նստաշրջաններն անցկացվում են Կազմակերպության կենտրոնական գրասենյակում:
5. Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիայի կողմ պետությունները պետք է հնարավորություն ստանան՝ որպես դիտորդներ մասնակցելու Գլխավոր ասամբլեայի նիստերին:
6. Գլխավոր ասամբլեան ընդունում է իր կանոնակարգը:

ՀՈԴՎԱԾ 7
Խորհրդաժողով

1. ա) Հիմնադրվում է Խորհրդաժողով, որը կազմված է սույն Կոնվենցիայի կողմ պետություններից՝ անկախ նրանից՝ նրանք հանդիսանո՞ւմ են Միություններից որեւէ մեկի անդամ, թե ոչ:
բ) Յուրաքանչյուր պետության կառավարություն պետք է ներկայացված լինի մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ ու փորձագետներ:
գ) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը հոգում է նրան նշանակած կառավարությունը:
2. Խորհրդաժողովը՝
i) քննարկում է մտավոր սեփականության բնագավառում ընդհանուր հետաքրքրություն ունեցող հարցեր եւ կարող է այդ հարցերի կապակցությամբ

ընդունել հանձնարարականներ՝ հաշվի առնելով Միությունների իրավասությունը եւ
ինքնուրույնությունը,
ii) ընդունում է Խորհրդաժողովի երկամյա բյուջե,
iii) իր բյուջեի շրջանակներում ընդունում է իրավատեխնիկական օգնության երկամյա ծրագիր,
iv) 17-րդ հոդվածում նախատեսված կարգով ընդունում է ուղղումներ սույն Կոնվենցիայում,
v) որոշում է, թե Կազմակերպության անդամ չհանդիսացող որ պետությունները եւ
որ միջկառավարական ու միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները կարող
են հնարավորություն ստանալ՝ որպես դիտորդներ մասնակցելու իր նիստերին,
vi) կատարում է այլ համապատասխան գործառույթներ սույն Կոնվենցիայի շրջանակներում:
3. ա) Յուրաքանչյուր անդամ պետություն Խորհրդաժողովում ունի մեկ ձայն:
բ) Անդամ պետությունների 1/3-ը կազմում է քվորում:
գ) Պահպանելով 17-րդ հոդվածի պահանջները՝ Խորհրդաժողովը որոշումներն ընդունում է քվեարկողների ձայների 2/3-ով:
դ) Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիայի կողմ պետությունների մուծումների չափը որոշվում է քվեարկությամբ, որին իրավունք ունեն մասնակցելու միայն այդ պետությունների պատվիրակները:
ե) Ձեռնպահ ձայները չեն հաշվվում:
զ) Պատվիրակը կարող է ներկայացնել միայն մեկ պետություն եւ քվեարկել միայն
նրա անունից:
4. ա) Խորհրդաժողովի հերթական նստաշրջանը գումարվում է Գլխավոր տնօրենի
կողմից՝ այն նույն ժամանակ եւ նույն տեղում, ինչ Գլխավոր ասամբլեայի նստաշրջանը:
բ) Խորհրդաժողովի արտակարգ նստաշրջանը գումարվում է Գլխավոր տնօրենի կողմից՝ անդամ պետությունների մեծամասնության պահանջով:
5. Խորհրդաժողովն ընդունում է իր կանոնակարգը:

ՀՈԴՎԱԾ 8
Համակարգող կոմիտե

1. ա) Հիմնադրվում է Համակարգող կոմիտե, որը կազմված է սույն Կոնվենցիայի
կողմ պետություններից, որոնք հանդիսանում են Փարիզի միության Գործադիր կոմիտեի
կամ Բեռնի միության Գործադիր կոմիտեի կամ դրանց երկուսի անդամներ: Սակայն եթե
այդ Գործադիր կոմիտեներից որեւէ մեկը կազմված է իրեն ընտրած Ասամբլեայի 1/4-ից
ավելի անդամ պետություններից, այդ Գործադիր կոմիտեն իր անդամներից նշանակում է
այն պետություններին, որոնք կլինեն Համակարգող կոմիտեի անդամներ՝ այն
հաշվարկով, որ նրանց քանակը չպետք է գերազանցի վերը նշված 1/4-ը. ընդ որում,

համարվում է, որ այն պետությունը, որի տարածքում գտնվում է Կազմակերպության
կենտրոնական գրասենյակը, չի հաշվարկվում նշված 1/4-ը հաշվարկելիս:

բ) Համակարգող կոմիտեի յուրաքանչյուր անդամ պետության կառավարություն պետք
է ներկայացված լինի մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ,
խորհրդականներ ու փորձագետներ:

գ) Երբ Համակարգող կոմիտեն քննարկում է կամ Խորհրդաժողովի ծրագրի կամ
բյուջեի եւ նրա օրակարգի հետ անմիջականորեն կապ ունեցող հարցեր կամ սույն
Կոնվենցիայի մեջ վերջինիս՝ Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող կողմ
պետությունների իրավունքները կամ պարտականությունները շոշափող ուղղումներ
կատարելու վերաբերյալ առաջարկությունները, այդ պետությունների 1/4-ը
Համակարգող կոմիտեի նիստերին մասնակցում է այն նույն իրավունքներով, ինչ
Համակարգող կոմիտեի անդամները: Խորհրդաժողովը յուրաքանչյուր հերթական
նստաշրջանի ընթացքում ընտրում է պետություններ՝ այդ նիստերին մասնակցելու
համար:

դ) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը հոգում է նրան նշանակած
կառավարությունը:

2. Եթե Կազմակերպության կողմից ղեկավարվող մյուս Միությունները ցանկանում
են որպես այդպիսին ներկայացված լինեն Համակարգող կոմիտեում, նրանց
ներկայացուցիչները պետք է նշանակված լինեն Համակարգող կոմիտեի անդամ
պետությունների թվից:

3. Համակարգող կոմիտեն՝

i) խորհուրդներ է տալիս Միությունների մարմիններին, Գլխավոր ասամբլեային,
Խորհրդաժողովին եւ Գլխավոր տնօրենին բոլոր վարչական, ֆինանսական եւ այլ
հարցերով, որոնք ընդհանուր հետաքրքրություն ունեն երկու կամ ավելի
Միությունների կամ մեկ կամ ավելի Միությունների ու Կազմակերպության համար, եւ,
մասնավորապես, Միությունների համար ընդհանուր ծախսերի բյուջեի վերաբերյալ,

ii) նախապատրաստում է Գլխավոր ասամբլեայի օրակարգի նախագիծը,

iii) նախապատրաստում է Խորհրդաժողովի օրակարգի նախագիծը, ինչպես նաեւ
ծրագրի ու բյուջեի նախագծերը,

iv) [հանված է],

v) մինչեւ Գլխավոր տնօրենի լիազորությունների ժամկետի ավարտը կամ երբ
Գլխավոր տնօրենի պաշտոնը թափուր է մնում, ներկայացնում է թեկնածու՝ Գլխավոր
ասամբլեայի կողմից այդ պաշտոնում նշանակվելու համար. եթե Գլխավոր ասամբլեան
այդ թեկնածուին չի նշանակում, Համակարգող կոմիտեն ներկայացնում է մեկ այլ
թեկնածուի. այս ընթացակարգը կրկնվում է այնքան ժամանակ, մինչեւ որ ներկայացված
թեկնածուն նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից,

vi) եթե Գլխավոր տնօրենի պաշտոնը թափուր է մնում Գլխավոր ասամբլեայի երկու
նստաշրջանների միջեւ ընկած ժամանակահատվածում, մինչեւ նոր Գլխավոր տնօրենի՝

պաշտոն ստանձնելը նշանակում է Գլխավոր տնօրենի պաշտոնակատար,
vii) կատարում է սույն Կոնվենցիային համապատասխան իր վրա դրված մյուս բոլոր գործառույթները:
4. ա) Համակարգող կոմիտեի հերթական նստաշրջանը գումարվում է Գլխավոր տնօրենի կողմից՝ տարին մեկ անգամ: Դա, որպես կանոն, տեղի է ունենում Կազմակերպության կենտրոնական գրասենյակում:
բ) Համակարգող կոմիտեի արտակարգ նստաշրջանը գումարվում է Գլխավոր տնօրենի
կողմից՝ կամ վերջինիս նախաձեռնությամբ, կամ Նախագահի, կամ Համակարգող կոմիտեի
անդամների 1/4-ի պահանջով:
5. ա) Յուրաքանչյուր պետություն, անկախ նրանից՝ նա հանդիսանո՞ւմ է 1-ին կետի "ա" ենթակետում նշված Գործադիր կոմիտեներից մեկի կամ երկուսի անդամ, թե
ոչ, Համակարգող կոմիտեում ունի մեկ ձայն:
բ) Համակարգող կոմիտեի անդամների կեսը կազմում է քվորում:
գ) Պատվիրակը կարող է ներկայացնել միայն մեկ պետություն եւ քվեարկել միայն
նրա անունից:
6. ա) Համակարգող կոմիտեն իր կարծիքն արտահայտում եւ որոշումներն ընդունում է քվեարկողների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձեռնպահ ձայները չեն
հաշվվում:
բ) Եթե նույնիսկ պարզ մեծամասնությունն առկա է, Համակարգող կոմիտեի ցանկացած անդամ քվեարկությունից անմիջապես հետո կարող է պահանջել, որ կատարվի
ձայների հատուկ վերահաշվարկ հետեւյալ կարգով. պետք է կազմվի երկու առանձին
ցուցակ, որտեղ նշվում են, համապատասխանաբար, Փարիզի միության Գործադիր կոմիտեի
եւ Բեռնի միության Գործադիր կոմիտեի անդամ պետությունների անունները. յուրաքանչյուր պետության քվեն պետք է նշվի համապատասխան ցուցակում (կամ ցուցակներում)՝ նրա անվան դիմաց: Եթե այդ հատուկ վերահաշվարկը ցույց է տալիս,
որ այդ ցուցակներից ամեն մեկում պարզ մեծամասնությունն առկա չէ, առաջարկությունն ընդունված չի համարվում:
7. Կազմակերպության ցանկացած անդամ պետություն, որը չի հանդիսանում Համակարգող կոմիտեի անդամ, կարող է Կոմիտեի նիստերին ներկայացված լինել դիտորդների միջոցով, որոնք իրավունք ունեն մասնակցելու քննարկումներին՝ առանց
ձայնի իրավունքի:
8. Համակարգող կոմիտեն ընդունում է իր կանոնակարգը:

ՀՈԴՎԱԾ 9
Միջազգային բյուրո

1. Միջազգային բյուրոն Կազմակերպության Քարտուղարությունն է:
2. Միջազգային բյուրոն գլխավորում է Գլխավոր տնօրենը, որն ունի երկու կամ ավելի Գլխավոր տնօրենի տեղակալներ:
3. Գլխավոր տնօրենը նշանակվում է որոշակի ժամկետով, որը չի կարող վեց տարուց պակաս լինել: Նա կարող է նորից նշանակվել որոշակի ժամկետներով:

Սկզբնական նշանակման եւ հնարավոր հետագա նշանակումների ժամկետները, ինչպես
նաեւ նշանակման մյուս բոլոր պայմանները սահմանվում են Գլխավոր ասամբլեայի
կողմից:

4. ա) Գլխավոր տնօրենը Կազմակերպության գլխավոր պաշտոնատար անձն է:

բ) Նա ներկայացնում է Կազմակերպությունը:

գ) Նա հաշվետու է Գլխավոր ասամբլեայի առջեւ եւ կատարում է Կազմակերպության
ներքին ու արտաքին գործերին վերաբերող նրա հրահանգները:

5. Գլխավոր տնօրենը պատրաստում է բյուջեների ու ծրագրերի նախագծեր, ինչպես
նաեւ գործունեության մասին պարբերական հաշվետվություններ: Նա դրանք փոխանցում
է շահագրգիռ պետությունների կառավարություններին, ինչպես նաեւ Միությունների
ու Կազմակերպության իրավասու մարմիններին:

6. Գլխավոր տնօրենը եւ նրա կողմից նշանակված անձնակազմի ցանկացած անդամ
մասնակցում են Գլխավոր ասամբլեայի, Խորհրդաժողովի, Համակարգող կոմիտեի եւ
ցանկացած այլ կոմիտեի կամ աշխատանքային խմբի բոլոր նիստերին՝ առանց ձայնի
իրավունքի:

7. Գլխավոր տնօրենը նշանակում է Միջազգային բյուրոյի խնդիրների
արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ անձնակազմ: Նա Գլխավոր տնօրենի
տեղակալներին նշանակում է Համակարգող կոմիտեի հավանությունն ստանալուց հետո:
Նշանակման պայմանները սահմանվում են Համակարգող կոմիտեի կողմից Գլխավոր
տնօրենի առաջարկությամբ հաստատվող անձնակազմի մասին կանոնակարգով: Անձնակազմի
ընտրության եւ ծառայության պայմանները սահմանելու հարցում կարեւորագույն
գործոն է հանդիսանում աշխատունակության, բանիմացության ու բարեխղճության բարձր
մակարդակի ապահովման անհրաժեշտությունը: Պատշաճ ուշադրություն պետք է դարձվի
հնարավորինս լայն աշխարհագրական հիմքի վրա անձնակազմի ընտրության
կարեւորությանը:

8. Գլխավոր տնօրենի եւ անձնակազմի պարտականություններն իրենց բնույթով
բացառապես միջազգային են: Իրենց պարտականությունները կատարելիս նրանք չպետք է
պահանջեն կամ ստանան հրահանգներ որեւէ կառավարությունից կամ Կազմակերպության
շրջանակներից դուրս որեւէ իշխանությունից: Նրանք պետք է ձեռնպահ մնան ցանկացած
այնպիսի գործողությունից, որը կարող է կասկածի տակ դնել նրանց՝ որպես
միջազգային պաշտոնատար անձանց կարգավիճակը: Յուրաքանչյուր անդամ պետություն

պարտավոր է հարգել Գլխավոր տնօրենի եւ անձնակազմի պարտականությունների
բացառապես միջազգային բնույթը եւ չփորձել ազդել նրանց վրա վերջիններիս կողմից
իրենց լիազորությունները կատարելիս:

ՀՈԴՎԱԾ 10
Կենտրոնական գրասենյակը

1. Կազմակերպության կենտրոնական գրասենյակը գտնվում է Ժնեւում:
2. Այն տեղափոխելու մասին որոշումը կարող է ընդունվել Գլխավոր ասամբլեայի
կողմից, ինչպես դա նախատեսված է 6-րդ հոդվածի 3-րդ կետի "դ" եւ "է"
ենթակետերում:

ՀՈԴՎԱԾ 11
Ֆինանսները

1. Կազմակերպությունն ունի երկու առանձին բյուջե՝ Միությունների համար
ընդհանուր ծախսերի բյուջե եւ Խորհրդաժողովի բյուջե:
2. ա) Միությունների համար ընդհանուր ծախսերի բյուջեն նախատեսում է մի
քանի Միությունների համար անհրաժեշտ ծախսեր:
բ) Այդ բյուջեն ֆինանսավորվում է հետեւյալ աղբյուրներից.
i) Միությունների մուծումներից. ընդ որում՝ յուրաքանչյուր Միության
մուծումների չափը որոշվում է այդ Միության Ասամբլեայի կողմից՝ հաշվի առնելով
ընդհանուր ծախսերի այն մասնաբաժինը, որը կատարվում է՝ տվյալ Միության շահերից
ելնելով,
ii) Միջազգային բյուրոյի կողմից մատուցվող այնպիսի ծառայությունների դիմաց
վճարումներից, որոնք անմիջականորեն չեն վերաբերում ոչ Միություններից որեւէ
մեկին, ոչ Միջազգային բյուրոյի կողմից իրավատեխնիկական օգնություն ցույց
տալուն,
iii) Միջազգային բյուրոյի այնպիսի հրատարակությունների վաճառքից կամ դրանց
նկատմամբ իրավունքների փոխանցումից ստացվող եկամուտներից, որոնք անմիջականորեն
չեն վերաբերում Միություններից որեւէ մեկին,
iv) Կազմակերպության օգտին նվիրատվություններից, կտակված միջոցներից եւ
սուբսիդիաներից՝ բացառությամբ 3-րդ հոդվածի "բ" կետի (iv) ենթակետում
նախատեսված դեպքերի,
v) ռենտայից, տոկոսներից եւ Կազմակերպության զանազան այլ եկամուտներից:
3. ա) Խորհրդաժողովի բյուջեն նախատեսում է ծախսեր Խորհրդաժողովի
նստաշրջանների անցկացման եւ իրավատեխնիկական օգնության ծրագրի իրականացման
համար:
բ) Այդ բյուջեն ֆինանսավորվում է հետեւյալ աղբյուրներից.
i) Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիայի կողմ
պետությունների մուծումներից,

ii) Միությունների կողմից այդ բյուջե կատարվող հատկացումներից. ընդ որում՝ յուրաքանչյուր Միության հատկացումների չափը որոշվում է այդ Միության Ասամբլեայի կողմից, եւ ցանկացած Միություն կարող է ձեռնպահ մնալ այդ բյուջե հատկացումներ կատարելուց,

iii) Միջազգային բյուրոյի կողմից իրավատեխնիկական օգնության բնագավառում մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող միջոցներից,

iv) "ա" ենթակետում նախատեսված նպատակների համար Կազմակերպության օգտին նվիրատվություններից, կտակված միջոցներից եւ սուբսիդիաներից:

4. ա) Խորհրդաժողովի բյուջե իր մուծումների չափը որոշելու համար Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիայի կողմ յուրաքանչյուր պետություն դասվում է որոշակի կարգի եւ իր տարեկան մուծումը կատարում է հետեւյալ կերպ սահմանված միավորների թվի հիման վրա.

Կարգ A.....10

Կարգ B.....3

Կարգ C.....1

բ) Յուրաքանչյուր այդպիսի պետություն 14-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված գործողությունները կատարելու հետ միաժամանակ պետք է նշի այն կարգը, որին ցանկանում է դասվել: Ցանկացած այդպիսի պետություն կարող է փոխել կարգը: Եթե պետությունն ընտրում է ավելի ցածր կարգ, նա պետք է այդ մասին տեղեկացնի Խորհրդաժողովի հերթական նստաշրջանի ժամանակ: Ցանկացած այդպիսի փոփոխություն ուժի մեջ է մտնում նստաշրջանին հաջորդող օրացուցային տարվա սկզբից:

գ) Յուրաքանչյուր այդպիսի պետության տարեկան մուծումը հավասար է գումարի, որը բոլոր այդ պետությունների կողմից Խորհրդաժողովի բյուջե վճարման ենթակա ընդհանուր գումարի հետ գտնվում է այնպիսի հարաբերակցության մեջ, ինչպես նրա միավորների թիվը՝ բոլոր նշված պետությունների միավորների ընդհանուր թվի հետ:

դ) Մուծումները կատարվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

ե) Եթե մինչեւ նոր ֆինանսական ժամանակահատվածը բյուջեն չի ընդունվել, ֆինանսական կանոնակարգին համապատասխան՝ կիրառվում է նախորդ տարվա բյուջեն:

5. Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիայի ցանկացած կողմ պետություն, որը սույն հոդվածում նախատեսված իր ֆինանսական մուծումների մասով պարտքեր ունի, ինչպես նաեւ Միություններից որեւէ մեկի անդամ հանդիսացող՝ սույն Կոնվենցիայի ցանկացած կողմ պետություն, որը որեւէ Միության նկատմամբ իր մուծումների մասով պարտքեր ունի, կորցնում է ձայնի իրավունքը Կազմակերպության այն մարմիններում, որի անդամ է հանդիսանում, եթե նրա պարտքի գումարը հավասար է կամ գերազանցում է ամբողջ երկու նախորդ տարիների համար

նրանից հասանելիք մուծումների գումարը: Սակայն այդ մարմիններից յուրաքանչյուրը
կարող է այդ պետությանը թույլ տալ օգտվել ձայնի իրավունքից, եթե եւ քանի դեռ
նա համոզված է, որ մուծումների ուշացումը պայմանավորված է բացառիկ ու
անխուսափելի հանգամանքներով:

6. Իրավատեխնիկական օգնության բնագավառում Միջազգային բյուրոյի կողմից
մատուցվող ծառայությունների դիմաց վճարումների չափը սահմանվում է Գլխավոր
տնօրենի կողմից եւ զեկուցվում է Համակարգող կոմիտեին:

7. Կազմակերպությունը, Համակարգող կոմիտեի հավանությամբ, կարող է
անմիջականորեն կառավարություններից, պետական կամ մասնավոր հիմնարկներից,
ընկերակցություններից կամ մասնավոր անձանցից ստանալ նվիրատվություններ,
կտակված միջոցներ եւ սուբսիդիաներ:

8. ա) Կազմակերպությունն ունի շրջանառու միջոցների ֆոնդ, որը ձեւավորվում
է Միությունների ու Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող՝ սույն
Կոնվենցիայի յուրաքանչյուր կողմ պետության կողմից կատարվող միանվագ մուծումից:
Եթե շրջանառու միջոցների ֆոնդը չի բավարարում, այն պետք է մեծացվի:

բ) Յուրաքանչյուր Միության միանվագ մուծման չափը եւ նրա հնարավոր
մասնակցությունը ֆոնդի մեծացմանը որոշվում է Միության Ասամբլեայի կողմից:

գ) Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիայի
յուրաքանչյուր կողմ պետության միանվագ մուծման չափը եւ նրա մասնաբաժինը ֆոնդի
ցանկացած մեծացման մեջ համամասնական են այդ պետության տարեկան մուծմանը այն
տարվա համար, երբ ձեւավորվել է ֆոնդը, կամ որոշում է ընդունվել դրա մեծացման
մասին: Այդ համամասնությունը եւ մուծման պայմանները սահմանվում են
Խորհրդաժողովի կողմից՝ Գլխավոր տնօրենի առաջարկությամբ՝ այն բանից հետո, երբ
նա լսում է Համակարգող կոմիտեի կարծիքը:

9. ա) Կենտրոնական գրասենյակի մասին համաձայնագրում, որը կնքվել է այն
պետության հետ, որի տարածքում գտնվում է Կազմակերպության կենտրոնական
գրասենյակը, նախատեսվում է, որ այն դեպքերում, երբ շրջանառու միջոցների ֆոնդը
անբավարար է, այդ պետությունը պետք է տրամադրի կանխավճարներ: Այդ
կանխավճարների չափը եւ տրամադրելու պայմանները յուրաքանչյուր դեպքում այդ
պետության ու Կազմակերպության միջեւ հատուկ համաձայնագրի առարկա են
հանդիսանում: Քանի դեռ այդ կողմ պետությունը պարտավոր է կանխավճարներ
տրամադրել, նա ex officio ունի մեկ տեղ Համակարգող կոմիտեում:

բ) Ինչպես "ա" ենթակետում նշված պետությունը, այնպես էլ Կազմակերպությունը
իրավունք ունեն գրավոր ծանուցման միջոցով չեղյալ հայտարարել կանխավճարներ
տրամադրելու պարտավորությունը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն
տարվա ավարտից հետո երեք տարի անց, երբ ներկայացվել էր ծանուցումը:

10. Հաշիվների վերստուգումը կատարվում է մեկ կամ մի քանի անդամ

պետությունների կամ արտաքին վերստուգողների կողմից, ինչպես դա նախատեսված է
ֆինանսական կանոնակարգում: Նրանք նշանակվում են իրենց համաձայնությամբ՝
Գլխավոր ասամբլեայի կողմից:

ՀՈԴՎԱԾ 12
Իրավունակությունը, արտոնությունները եւ անձեռնմխելիությունը

1. Կազմակերպությունը յուրաքանչյուր անդամ պետության տարածքում, վերջինիս
օրենքներին համապատասխան, օգտվում է այնպիսի իրավունակությունից, որն
անհրաժեշտ է Կազմակերպության նպատակներին հասնելու եւ նրա գործառույթներն
իրականացնելու համար:
2. Կազմակերպությունը պետք է կենտրոնական գրասենյակի մասին համաձայնագիր
կնքի Շվեյցարիայի Համադաշնության ու ցանկացած այլ պետության հետ, որտեղ
հետագայում կարող է գտնվել կենտրոնական գրասենյակը:
3. Կազմակերպությունը կարող է երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կնքել
այլ անդամ պետությունների հետ՝ Կազմակերպության, նրա պաշտոնատար անձանց եւ
անդամ պետությունների բոլոր ներկայացուցիչների համար այնպիսի արտոնություններ
ու անձեռնմխելիություն ապահովելու նպատակով, որոնք կարող են անհրաժեշտ լինել
իր նպատակներին հասնելու եւ գործառույթներն իրականացնելու համար:
4. Գլխավոր տնօրենը կարող է բանակցություններ վարել եւ Համակարգող կոմիտեի
հավանությունը ստանալուց հետո Կազմակերպության անունից կնքում ու ստորագրում է
2-րդ եւ 3-րդ կետերում նշված համաձայնագրերը:

ՀՈԴՎԱԾ 13
Հարաբերությունները այլ կազմակերպությունների հետ

1. Կազմակերպությունը, ելնելով նպատակահարմարությունից, աշխատանքային
հարաբերություններ է հաստատում ու համագործակցում է այլ միջկառավարական
կազմակերպությունների հետ: Տվյալ հարցով այդ կազմակերպությունների հետ
համաձայնեցված ցանկացած գլխավոր համաձայնագիր կնքվում է Գլխավոր տնօրենի
կողմից՝ Համակարգող կոմիտեի հավանությունը ստանալուց հետո:
2. Կազմակերպությունը կարող է համապատասխան միջոցներ ձեռնարկել իր
իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ միջազգային ոչ կառավարական
կազմակերպությունների, ինչպես նաեւ, շահագրգիռ կառավարությունների
համաձայնությամբ, կառավարական կամ ոչ կառավարական ազգային
կազմակերպությունների հետ խորհրդակցությունների ու համագործակցության

ուղղությամբ: Այդպիսի միջոցները ձեռնարկվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ Համակարգող կոմիտեի հավանությունը ստանալուց հետո:

ՀՈԴՎԱԾ 14
Կոնվենցիայի կողմ դառնալը

1. 5-րդ հոդվածում նշված պետությունները կարող են սույն Կոնվենցիայի կողմ եւ Կազմակերպության անդամ դառնալ.

i) Կոնվենցիան ստորագրելու միջոցով՝ առանց վավերացման մասին վերապահման,

կամ

ii) Կոնվենցիան ստորագրելու միջոցով՝ վավերացման մասին վերապահումով, որից հետո վավերագիրն ի պահ կհանձնվի, կամ

iii) միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու միջոցով:

2. Չնայած սույն Կոնվենցիայի ցանկացած այլ դրույթի՝ Փարիզի կոնվենցիայի, Բեռնի կոնվենցիայի կամ այդ երկու կոնվենցիաների կողմ հանդիսացող պետությունը կարող է սույն Կոնվենցիայի կողմ դառնալ միայն, եթե նա միաժամանակ վավերացնում կամ միանում է, կամ եթե արդեն վավերացրել կամ միացել է.

կամ Փարիզի կոնվենցիայի Ստոկհոլմի ակտին ամբողջովին կամ միայն նրա 20-րդ հոդվածի 1-ին կետի "բ" (i) ենթակետում նախատեսված բացառությունով,

կամ Բեռնի կոնվենցիայի Ստոկհոլմի ակտին ամբողջովին կամ միայն նրա 28-րդ հոդվածի 1-ին կետի "բ" (i) ենթակետում նախատեսված բացառությունով:

3. Վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

ՀՈԴՎԱԾ 15
Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Փարիզի միության տասն անդամ պետությունների եւ Բեռնի միության յոթ անդամ պետությունների կողմից 14-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված գործողությունները կատարվելուց երեք ամիս հետո. ընդ որում՝ համարվում է, որ եթե միեւնույն պետությունը հանդիսանում է երկու Միությունների անդամ, նա պետք է հաշվվի երկու խմբերում: Նույն օրը Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նաեւ այն պետությունների նկատմամբ, որոնք, չլինելով այդ երկու Միություններից որեւէ մեկի անդամ, ոչ ուշ, քան այդ օրվանից երեք ամիս առաջ կատարել են 14-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված գործողությունները:

2. Ցանկացած այլ պետության նկատմամբ սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն օրվանից երեք ամիս հետո, երբ այդ պետությունը կատարում է 14-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված գործողությունները:

ՀՈԴՎԱԾ 16
Վերապահումները

Սույն Կոնվենցիայի վերաբերյալ որեւէ վերապահում չի կարող արվել:

ՀՈԴՎԱԾ 17
Ուղղումներ

1. Սույն Կոնվենցիայում ուղղումներ կատարելու մասին առաջարկություններ կարող են ներկայացվել Կազմակերպության ցանկացած անդամ պետության, Համակարգող կոմիտեին կամ Գլխավոր տնօրենին: Այդ առաջարկությունները Գլխավոր տնօրենի կողմից ուղարկվում են Կազմակերպության անդամ պետություններին դրանք Խորհրդաժողովում քննարկելուց առնվազն վեց ամիս առաջ:

2. Ուղղումներն ընդունվում են Խորհրդաժողովի կողմից: Այն դեպքում, երբ ուղղումները կարող են շոշափել Միություններից որեւէ մեկի անդամ չհանդիսացող՝ սույն Կոնվենցիայի կողմ պետությունների իրավունքներն ու պարտականությունները, այդ պետությունները նույնպես մասնակցում են քվեարկությանը: Առաջարկվող մյուս բոլոր ուղղումների վերաբերյալ քվեարկում են միայն Միություններից որեւէ մեկի անդամ հանդիսացող՝ սույն Կոնվենցիայի կողմ պետությունները: Ուղղումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ՝ պայմանով, որ Խորհրդաժողովը քվեարկում է միայն ուղղումների մասին այնպիսի առաջարկությունների վերաբերյալ, որոնք նախապես ընդունվել են Փարիզի միության Ասամբլեայի եւ Բեռնի միության Ասամբլեայի կողմից՝ նրանցից յուրաքանչյուրում վերջիններիս համապատասխան կոնվենցիաների վարչական դրույթներում ուղղումների ընդունման վերաբերյալ կիրառվող կանոններին համապատասխան:

3. Ցանկացած ուղղում ուժի մեջ է մտնում մեկ ամիս անց այն բանից հետո, երբ յուրաքանչյուր պետության սահմանադրական ընթացակարգին համապատասխան՝ դրա ընդունման մասին գրավոր ծանուցումները Գլխավոր տնօրենի կողմից ստացվել են Խորհրդաժողովում այդ ուղղումի ընդունման ժամանակ 2-րդ կետի համաձայն ուղղումի մասին առաջարկության վերաբերյալ քվեարկելու իրավունք ունեցող Կազմակերպության անդամ պետությունների 3/4-ի կողմից: Այդ կարգով ընդունված ուղղումները պարտադիր են բոլոր այն պետությունների համար, որոնք Կազմակերպության անդամներ են այն ժամանակ, երբ այդ ուղղումն ուժի մեջ է մտնում, կամ որոնք դրա անդամներ են դառնում ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ պայմանով, որ ցանկացած ուղղում, որը մեծացնում է անդամ պետությունների ֆինանսական պարտավորությունները, պարտադիր է միայն այն պետությունների համար, որոնք հայտնել են իրենց կողմից այդ ուղղումն ընդունվելու մասին:

ՀՈԴՎԱԾ 18
Չեղյալ հայտարարելը

1. Ցանկացած անդամ պետություն կարող է Գլխավոր տնօրենին հասցեագրված ծանուցման միջոցով չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:
2. Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր տնօրենի ստանալու օրվանից հետո վեց ամիս անց:

ՀՈԴՎԱԾ 19
Ծանուցումներ

Գլխավոր տնօրենը բոլոր անդամ պետությունների կառավարություններին պետք է ծանուցի.
i) սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա մասին,
ii) վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերը ստորագրելու եւ ի պահ հանձնելու մասին,
iii) սույն Կոնվենցիայի մեջ ցանկացած ուղղում ընդունելու եւ այն օրվա մասին, երբ այդ ուղղումն ուժի մեջ է մտնում,
iv) սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարելու մասին:

ՀՈԴՎԱԾ 20
Եզրափակիչ դրույթներ

1. ա) Սույն Կոնվենցիան ստորագրվում է մեկ օրինակով՝ անգլերեն, իսպաներեն, ռուսերեն եւ ֆրանսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են եւ ի պահ են հանձնվում Շվեդիայի Կառավարությանը:
բ) Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Ստոկհոլմում մինչեւ 1968 թվականի հունվարի 13-ը:
2. Պաշտոնական թարգմանությունների տեքստերը կպատրաստվեն Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ կառավարությունների հետ խորհրդակցություններից հետո՝ գերմաներեն, իտալերեն ու պորտուգալերեն եւ այլ լեզուներով, որոնք կորոշվեն Խորհրդաժողովի կողմից:
3. Գլխավոր տնօրենը պետք է սույն Կոնվենցիայի եւ Խորհրդաժողովի կողմից ընդունված յուրաքանչյուր ուղղումի՝ պատշաճ ձեւով հաստատված երկուական պատճեններ ուղարկի Փարիզի կամ Բեռնի միությունների անդամ պետությունների կառավարություններին, յուրաքանչյուր պետության կառավարության, երբ նա միանում է սույն Կոնվենցիային, ինչպես նաեւ ցանկացած այլ պետության կառավարության՝ վերջինիս խնդրանքով: Կառավարություններին ուղարկվող՝ Կոնվենցիայի ստորագրված տեքստի պատճենները հաստատվում են Շվեդիայի Կառավարության կողմից:
4. Գլխավոր տնօրենը սույն Կոնվենցիան պետք է գրանցի Միավորված ազգերի կազմակերպության Քարտուղարությունում:

ՀՈԴՎԱԾ 21
Անցումային դրույթներ

1. Մինչեւ առաջին Գլխավոր տնօրենի կողմից պաշտոնի անցնելը սույն Կոնվենցիայում Միջազգային բյուրոյին կամ Գլխավոր տնօրենին արված հղումները համարվում են հղումներ, համապատասխանաբար, Արդյունաբերական, գրական եւ գեղարվեստական սեփականության պաշտպանության միացյալ միջազգային բյուրոյին (որը անվանվում է նաեւ Մտավոր սեփականության պաշտպանության միացյալ միջազգային բյուրո (ՄՍՊՄՄԲ) կամ նրա Տնօրենին:

2. ա) Միություններից որեւէ մեկի անդամ հանդիսացող պետությունները, որոնք, սակայն, չեն դարձել սույն Կոնվենցիայի կողմեր, կարող են, եթե ցանկանան, սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարվա ընթացքում օգտվել այն նույն իրավունքներից, որոնցից կօգտվեին սույն Կոնվենցիայի կողմեր լինելու դեպքում: Ցանկացած պետություն, որը ցանկանում է օգտվել այդ իրավունքներից, այդ մասին գրավոր ծանուցում է Գլխավոր տնօրենին. այդ ծանուցումը գործում է այն ստանալու օրվանից: Այդ պետությունները համարվում են Գլխավոր ասամբլեայի եւ Խորհրդաժողովի անդամներ մինչեւ նշված ժամկետի ավարտը:

բ) Այդ հնգամյա ժամկետի ավարտից հետո նշված պետությունները կորցնում են ձայնի իրավունքը Գլխավոր ասամբլեայում, Խորհրդաժողովում եւ Համակարգող կոմիտեում:

գ) Դառնալով սույն Կոնվենցիայի կողմեր՝ այդ պետությունները նորից ստանում են ձայնի իրավունք:

3. ա) Քանի դեռ կան Փարիզի կամ Բեռնի միությունների անդամ պետություններ, որոնք դեռ չեն դարձել սույն Կոնվենցիայի կողմեր, Միջազգային բյուրոն եւ Գլխավոր տնօրենը գործում են նաեւ որպես, համապատասխանաբար, Արդյունաբերական, գրական եւ գեղարվեստական սեփականության պաշտպանության միացյալ միջազգային բյուրո եւ դրա Տնօրեն:

բ) Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նշված Բյուրոներում ընդգրկված անձնակազմը "ա" ենթակետում նշված անցումային ժամանակահատվածի ընթացքում համարվում է ընդգրկված նաեւ Միջազգային բյուրոյի կազմում:

4. ա) Երբ Փարիզի միության բոլոր անդամ պետությունները դառնում են Կազմակերպության անդամներ, այդ Միության Բյուրոյի իրավունքները, պարտականությունները եւ գույքը անցնում են Կազմակերպության Միջազգային բյուրոյին:

բ) Երբ Բեռնի միության բոլոր անդամ պետությունները դառնում են Կազմակերպության անդամներ, այդ Միության Բյուրոյի իրավունքները, պարտականությունները եւ գույքը անցնում են Կազմակերպության Միջազգային բյուրոյին:

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի ապրիլի 22-ից: